

Նարեկ Հակոբյան

ՍԱՍՈՒՆԻ 1894 Թ. ԻՆՔՆԱԳԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ ՉՈՅՎԱԾՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇՈՒՐՁ (Ըստ Սրբազան Սինոդի արխիվային ֆոնդի վավերագրերի)

Բանալի բառեր - Սասունի ինքնապաշտպանություն, Սրբազան Սինոդ, Վարդան վարդապետ Հակոբյան, Սասունի կոտորածներ, Տալվորիկ, Սեմալ, Շենիկ, Մշո դաշտ:

19-րդ դարի վերջերին հայ ազգային-ազատագրական շարժման կենտրոն է դառնում Օսմանյան կայսրության Բիթլիսի վիլայեթի մեջ մտնող Սասուն լեռնազավառը: Արխիվային վավերագրերը սասունցիների վիճակի մասին բնույթով բազմազան են՝ նամակներ, ինդրագրեր, պաշտոնական դիմումներ, որոնք մեծաքանակ արժեքավոր փաստական նյութ են պարունակում աղբյուրագիտական լայն հիմքի վրա բնեղյու պատմաշրջանի իրադարձությունները:

Նշյալ վավերագրերից հատկապես արժեքավոր է Սասունի կոտորածների մասին տեղեկագիրը՝ գրված 1894 թ. հոկտեմբերի 28-ին Վիլեր անվանումով հեղինակի կողմից: Այն հանգամանքը, որ վավերագիրը գրեթե նույնությամբ տպագրվել է ՀՅԴ տպագիր օրգան «Դրոշակ» ամսագրում¹, խոսում է այն մասին, որ Սասունում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դեպքերը գտնվել են մամուլի և հասարակության ուշադրության կենտրոնում և կարծում ենք՝ քննվող ինդրի շրջանակներում կարելի է անդրադառնալ նրա աղբյուրագիտական արժեքին: Հրատարակված տարբերակի և վավերագրի միջև գոյություն ունեն որոշ տարբերություններ: Հրատարակված տարբերակում բացակայում է վերջին մասը, որտեղ հեղինակը նշում է իր անունը՝ Վիլեր²: Վավերագրում հեղինակը նշում է այն մարդկանց անունները ովքեր, աղբյուր են հանդիսացել տեղեկագիրը կազմելիս. «Տեղեկագրութեանս թերութիւնները կրնաք Սասնոյ Գելիէ Գուզանցի Ղազարից, Գրքօից և Խմոից լմցնել»: Բնագրում նշվում է նաև Մուրադի (Համբարձում Պոյաճյան) ձերբակալության և Ալեքսանդրապոլցի Սենեբերիմի մահվան մասին, որը հողվածում նույնպես բացակայում է³:

Փաստաթղթում գաղթած բնակչության վկայությունների հիման վրա նկարագրված է 1894 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Շենիկի⁴, Սեմալի⁵, Ալի-

¹ Տե՛ս «Դրոշակ, 1895, № 1:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 58բ, թ. 3:

³ Նույն տեղում, թ. 3:

⁴ Շենիկ – գյուղախումբ Բիթլիսի վիլայեթի Շատախի գավառում:

⁵ Սեմալ – գյուղ Բիթլիսի նահանգի Բուն Սասուն գավառակում:

անքի¹, Գելիեգուզանի², Տալվորիկի³ ինքնապաշտպանական մարտերը և կոտորածները: Նշվում են ինչպես դեպքերի ժամանակագրական, այնպես էլ գավառներում ինքնապաշտպանական մարտերի ընթացքը և կոտորածների հետևանքով սպանված մարդկանց քանակը:

Փաստաթուղթը սկսվում է Սասունի գավառակների նկարագրությամբ: Սկսելով Շենիկից՝ հեղինակը այն անվանում է գավառ և նշում է, որ Շենիկը բաղկացած էր չորս գյուղերից, սակայն պետք է նշել, որ Շենիկը ոչ թե գավառ էր, այլ գյուղախումբ: Սասունի գյուղերը հիմնականում բաղկացած էին մի քանի թաղերից, որոնք ունենալով իրենց անունները, միասին հայտնի էին գյուղ ընդհանուր անունով⁴: Սա է պատճառը, որ վիճակագրական տվյալների մեջ հանդիպում են մեծաքանակ տարբերություններ: Օրինակ, եթե Տալվորիկ գյուղի տների թիվը 30-40 է, իսկ մի այլ տվյալում 200-220, ապա սա նշանակում է, որ բուն գյուղը ունի 30-40 տուն, իսկ թաղերով միասին՝ 200-220⁵: Այսպիսով, Շենիկը բաղկացած էր չորս գյուղակթաղերից՝ 1. Շենիկ, 2. Սգրե 3. Գուռճոք 4. Տաքի: Այս 4 գյուղակթաղերում սպանվածների թիվը 950 հոգի էր, որից 620-ը Շենիկից էր, իսկ մնացյալը մյուս գյուղակներից⁶: Աշխարհագրական տեղեկությունների հետ անճշտություններ կարող էին լինել, քանի որ Օսմանյան կառավարության քաղաքականության հետևանքով, սկսած 1878 թվականից, վիլայեթների սահմաններն անընդմեջ վերագծելու նպատակը մեկն էր, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնությունն չկազմեն:

Սեմալի դեպքերի նկարագրությունից հասկանում ենք, որ այստեղ, ըստ փաստաթղթի, ինքնապաշտպանական մարտեր տեղի չեն ունեցել, քանի որ տեղի բահանա Տեր Յովհաննեսը 140 հոգով անձնատուր է եղել Երզնկայի Մուշուր փաշային⁷ (Լույս Չեքի փաշան - Ն.Յ.), որը հանձնվածներից մի մասին քերթեց, իսկ մնացածներին ողջ-ողջ թաղեց: Սեմալի հինգ գյուղերից՝ Սեմալ, Բլուր, Դաշտաք, Բլարթթան, Թաթան, զոհվածների թիվը հասնում էր 680 հոգու⁸:

Այնուհետև նկարագրվում է Ալիանք գավառում տեղի ունեցած ռազմական գործողությունների մանրամասները: Սկզբում ներկայացվում են Չայ գյուղի ինքնապաշտպանական մարտերը և ապա կոտորածը: Մուշիր փաշան մոտավորապես երեսուն թնդանոթներով և 24 զունդ հետևակով հարձակում սկսեց 14 գյուղերի վրա: Հայ գյուղացիությունը ապաստանում է Չայ գյուղի անառիկ վայրերում, որտեղ թշնամու թնդանոթների հարվածները ոչ մի վնաս չէին տալիս: Հայերի ինքնապաշտպանությունը երկար չտևեց, քանի որ սպառվում էր պարենը, որից հետո

¹ Ալիանք - գյուղ Սասունի շրջանի Բուն Սասուն գավառակում:

² Գելիեգուզան - գյուղախումբ Բիթլիս նահանգի Մուշ գավառի Շատախի գավառակում:

³ Տալվորիկ - գյուղախումբ Բիթլիս նահանգի Խուլի գավառակում:

⁴ Տե՛ս Զալանթար Ա., Սասուն, Թիֆլիս, 1895, էջ 13:

⁵ Լույս տեղում, էջ 13:

⁶ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 58թ, թ. 1:

⁷ Ծառուր Աղայանը քննելով այս իրադարձությունը, նշում է, որ Տեր Յովհաննեսը եղել է Անդոկի պաշտպանությանը մասնակցողների շարքում և հանձնվողների թիվը եղել է ոչ թե 140 այլ՝ 500: (Տե՛ս Ծառուր Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան 1976, էջ 130,)

⁸ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, Լույս տեղում, թ. 1:

թուրքական զորքերը ավերեցին ամբողջ գյուղը՝ ոչնչացվելով մոտավորապես 2100 կին, տղամարդ և երեխա¹:

Արիսիվային վավերագիրը ընդարձակ տեղեկություն է պարունակում նաև Գելիեգուզանի կռիվների մասին: Հեղինակը նշում է, որ գելիեգուզանցիների դեմ կռվում էր 30.000-ոց բանակ, որոնք ունեին 50 թնդանոթ: Մարտերը տևում են 20 օր: Պարտերը և վառողը վերջանալուն մոտ գելիեգուզանցիները որոշում են վերջին հարվածը հասցնել թուրքական զորքերին: Զաջարի Վարդան անունով մեկը դաշույնի հարվածով 24 հոգու է սպանում, ապա զոհվում է դաշույնի հարվածից:

Այստեղ նշվում է մի հետաքրքիր դրվագ. երբ այստեղի նորընծա քահանա Տեր Պետրոսը, ի տարբերություն Տեր Հովհաննեսի, շարունակում էր մարտը, մի խումբը սպանվելով՝ ցիրուցան եղավ, քսանի չափ զօրքեր հարձակուեցան Տ. Պետրոսի վրայ և սուլնով զարկին սպանեցին», իսկ դիակը կտոր-կտոր արին²:

Այնուհետև նույն ոճով նկարագրվում է Աղբիք գյուղափխմբի կռիվներն ու կոտորածները, որտեղ նույնպես գործի էին դրվել համիդյան զնդերը:

Փաստաթղթում տեղեկություններ կան Տալվորիկի կռիվների մասին, որը ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրությունում «հեղափոխական» օջախներից էր համարվում: Տալվորիկի կռիվն օսմանական բանակը նախապատրաստվել էր ամենայն լրջությամբ, քանի որ մինչ այդ գրավել և ավերել էր Տալվորիկի բոլոր գյուղերը: Տալվորիկի դեմ ելան քրդական հրոսակախմբերը և կանոնավոր բանակը՝ մոտ 40000 հոգի: Տալվորիկը շրջապատող 20 գյուղերի բնակիչներով՝ Մուրադի և Ալեքսանդրապոլցի Սենեբերիմի առաջնորդությամբ, ամրացան Վռվռքարի³ բարձունքներում: 10 օր տևած դիմադրությունից հետո թնդանոթների օգնությամբ միայն հնարավոր է լինում կոտրել տալվորիկցիների դիմադրությունը: Սկսվում է կոտորածը, որին, ըստ վավերագրի, զոհ է գնում մոտավորապես 5000 մարդ⁴:

Ընդհանուր առմամբ փաստաթղթում նշված գավառների ողջ մնացածների թիվը հասնում է 10000 մարդու, որ Մշո դաշի գյուղերում «մերկ և սովալլուկ կը պտտին»⁵:

Սասունի դեպքերին դիպուկ գնահատական է տվել Մաղաթիա Օրմանյանը՝ նշելով, որ հայ ժողովուրդը ոչ թե դիմեց ապստամբության, այլ ինքնապաշտպանության և թուրք կառավարության նպատակը ոչ թե «Մուրադին» գտնելն էր, այլ Սասունի երկու կարևորագույն հայաշատ օջախները՝ Տալվորիկ և Գելիեգուզան գավառակները հիմնովին ջնջելը⁶:

Այսպիսով, ըստ վավերագրի՝ Սասունի Շենիք, Սեմալ, Ալիանից, Գելիեգուզան և Տալվորիկ գավառակները՝ հարակից գյուղերով, ունեցել են մոտավորապես 11870 զոհ:

Սասունի զոհերի թվի վերաբերյալ այլ տվյալներ են պահպանվել Տարոնի առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանի գրությունում՝

¹ Նույն տեղում, թ. 1:

² Նույն տեղում, թ. 2:

³ Ֆռվռքար – լեռ Սասունի Տալվորիկ գավառակում:

⁴ Նույն տեղում, թ. 2:

⁵ ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 58 ք, թ. 3:

⁶ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 3, Բեյրութ, 1961, էջ 5022:

ուղղված Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսին: Նամակը գրվել է կոտորածներից մոտավորապես մեկ տարի անց, ինչը, կարծում ենք, հնարավորություն է տվել Վարդան վարդապետին ամենայն մանրամասնությամբ ճշգրտել մարդկային կորուստների իրական չափը:

Ի տարբերություն արդեն քննարկված տեղեկագրի, այստեղ տրված է Սասունի բնակավայրերի առավել լայն ցանկ, զոհերի թվից գատ կա նաև ողջ մնացածների թիվը, զոհվածների թվաքանակը առավել հստակ է և, ինչպես Վարդան վարդապետն է հավաստիացնում, «Սասուն այցելած միջոցնուս ամենաստույգ տեղեկություններ հաւաքեցինք կոտորածի և ողջ մնացյալներու թուոյն վրայ»: Վարդան վարդապետի տեղեկությունները¹ ներկայացնում ենք աղյուսակի տեսքով:

Գյուղ/գավառ	ողջ մնացած	Սպանված
Կելի՝ 17 գյուղերով	1255	1473
Սեմալ	605	587
Շենք	527	495
Իշխնձոր՝ 4 գյուղերով	445	259
Տալվորիկ՝ 13 գյուղերով	1002	1819
Ախբի՝ 3 գյուղերով	525	316
Կելիկելման	83	56
Ընդհանուր	4442	5005 ²

Վավերագրերում հանդիպում ենք տվյալների անհամապատասխանության՝ նախ զոհվածների և ողջ մնացածների (գաղթյալների) ինչպես ընդհանուր թվի, այնպես էլ առանձին գյուղերի կամ գավառակների բնակչության միջև: Ըստ առաջին տեղեկագրի Շենիքում զոհվել են 950 հոգի, իսկ Վարդան վարդապետի տվյալներով՝ 495, գրեթե կիսով պակաս: Նույն պատկերն է նաև զոհերի ընդհանուր թվաքանակի հետ կապված տվյալներում, ըստ տեղեկագրի՝ զոհերի թիվը կազմում է մոտավորապես 11870, իսկ ըստ Վարդան վարդապետի՝ 5005: Ցավոք սրտի վավերագրերում բացակայում են բնակչության ընդհանուր քանակի մասին տեղեկությունները, որ տվյալները ավելի արժանահավատ և ամբողջական կդարձնեին:

Կարո Սասունին «Պատմութիւն Տարոնի աշխարհի» աշխատության մեջ նշում է, որ Սասունը տվեց 500 կռվողների կորուստ, իսկ ժողովրդից սպանվեցին ևս 1200 հոգի³: «Քարոզչական նպատակով, այդ թուականներուն յայտարարուեցավ թէ տաս հազար Սասունցիներ կոտորուած էին: Այս թիւը թէ՛ եվրոպական և թէ՛ հայկական տարեգրութեան մէջ անփոփոխ մնաց. սակայն ճշգրիտը այն է, որ սասունցիները հազար եօթ հարիւր հոգի զոհ տուած էին»⁴: Ռեյտեր գործակալության կող-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 152, թ. 10:

² Բնագրում ողջ մնացածների և զոհվածների թիվը համապատասխանաբար ներկայացված է 4447 և 5004, ակնհայտ է, որ Վարդան վարդապետը սխալ է թույլ տվել հաշվարկի ընթացքում:

³ Տե՛ս Սասունի Կ., Պատմութիւն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1956, էջ 580:

⁴ Նույն տեղում:

մից Հայաստան ուղարկված թղթակիցը, ով դեպքերի ժամանակակիցն էր, Սասունում զոհերի թիվը նշում էր 1000-3000 մարդ¹:

Հայացք նետելով խորհրդահայ պատմագրությանը՝ համոզվում ենք Կարո Սասունու նկատառումների մեջ: Պատմաբան Լեոն իր «Անցյալից» ուսումնասիրության մեջ նշում է, որ «27 հայ գյուղեր կործանված են, ազգաբնակչությունը, վորի թիվը վոմանք հանում էին մինչև 10 հազարի, սրի ե քաշվում»²:

Այս թիվը ամրագրվում է նաև խորհրդային այլ պատմաբանների կողմից: Ծատուր Աղայանը իր «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» աշխատության մեջ հետևելով Լեոյին՝ զոհերի թիվը նույնպես նշում է 10000³, գրեթե նույն թիվն է նշում նաև Ստեփան Պողոսյանը «Հայոց ցեղասպանության պատմություն» աշխատությունում. «Կռիվների ընթացքում սասունցի կորուսյալների թիվը չանցավ 1500-ից, իսկ մարտական գործողությունների դադարից հետո ոչնչացված հայերի թիվը անցավ 9000-ից»⁴: Կնյազ Թառոյանը, անդրադառնալով Սասունի իրադարձությունների ընթացքում զոհվածների թվին, նշում է, որ սրի են քաշվել 10.000-16.000 մարդ⁵:

Թուրք պատմաբան Օսման Նուրին, անդրադառնալով Սասունի զոհերի քանակին, նույնպես խուսափում է կոնկրետ թիվ նշելուց և ենթադրում է, որ այրված գյուղերում կային 450-500 ընտանիքներ, որից յուրաքանչյուրը բաղկացած էր 10 անձից, ապա զոհերի ամբողջ կորուստը կկազմի 4500-5000 մարդ⁶: Այստեղ առաջանում են մի շարք հարցեր. արդյո՞ք Սասունի գյուղերում և կամ այն գյուղերում, որտեղ ընթանում էին կռիվներ, ապրում էր 450-500 ընտանիք, կամ եթե ընդունենք, որ ընտանիքների թիվը այդքան էր, արդյո՞ք բոլոր ընտանիքները անխնտիր ոչնչացվել են: Ըստ «Մուրճ» հանդեսի՝ Գելիում կար 360, Շենիկում 106, Սեմալում 85, Ալիանքում 165, Իշխանձորում 78, Աղբիում 66 տուն հայ բնակիչ⁷, բոլորը միասին կազմում է 860 տուն⁸: Միգուցե նշված բնակավայրերը հիմնահատակ այրվել և կողոպտվել են, սակայն սա դեռևս բավարար հիմք չի տալիս ենթադրելու, որ բնակչությունն էլ ամբողջովին կոտորվել է: Հայտնի փաստ է, որ կոտորածների արդյունքում բնակչությունը Սասունից տեղափոխվում է Մշո դաշտի բնակավայրերը:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող են եզրակացնել, որ աղբյուրներից առաջինը՝ տեղեկագիրը, կարող է շփոթության մեջ գցել ուսումնասիրողներն, քանի որ պարունակում է որոշ թյուր տեղեկություններ: Վավերագիրը վերջնականապես չճշգրտված և բնակչության վկայությունների հիման վրա տեղեկու-

¹ Տե՛ս Պողոսյան Գ. Սասունի պատմություն, Երևան, 1985, էջ 203:

² Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 104:

³ Տե՛ս Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 125:

⁴ Տե՛ս Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն. I, Երևան, 2008, էջ 482:

⁵ Տե՛ս Թառոյան Կ., Արևմտյան Հայաստանը, Արևմտահայերի սոցիալ-բաղաբնական վիճակը և ազատագրական պայքարը Սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ 1878-1908 թթ., Երևան, 2001, էջ 240:

⁶ Տե՛ս Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Թուրքական աղբյուրներ 4, հտ. 7, էջ 175:

⁷ Տե՛ս «Մուրճ», № 10, 1894, էջ 1504:

⁸ «Մուրճում» ներկայացված չէ Տալվորիկի տների քանակը, որը կազմում էր 400 հայաբնակ տուն:

թյուն է հաղորդում զոհվածների թվաքանակի մասին, որ կրկնակի անգամ ավել է զոհերի իրական թվից: Թերի են նաև տվյալները ինքնապաշտպանական կռիվների վերաբերյալ: Նկարագրելով Սեմալ գյուղի կոտորածները՝ հեղինակը չի նշում, որ Սեմալ գյուղի բնակիչները հանձին քահանա Տեր Յովհաննեսի, եղել են Անդոկի պաշտպանության մասնակիցներ: Այս ամենով հանդերձ, գտնում ենք, որ փաստաթուղթը կարևոր սկզբնաղբյուր է ինքնապաշտպանական մարտերի տարեգրությունը լրացնելու համար:

Այսպիսով, քննելով բազմատեսակ աղբյուրներ և Սասունի դեպքերին նվիրված ուսումնասիրություններ, գտնում ենք, որ Սասունի բնակչության մասին հավաստի սկզբնաղբյուր է Վարդան վարդապետի տեղեկագիրը: Տեղեկագրի օգտին է խոսում նաև ժամանակի մամուլում այն պնդումը, որ «Տաճկաստանում միայն հոգևորականութիւնը միջոց ունի իմանալ իր ժողովրդի ճիշտ թիւը»¹: Ինչպես ցույց տվեց վավերագրի համեմատական քննությունը, Վարդան վարդապետը հնարավորինս օգտվել է իր աղբյուրներից և առավելագույնս ջանացել է հնարավորին չափ ճշգրտված տվյալներ հաղորդել կաթողիկոսարան՝ գիտակցելով, որ իր տեղեկագիրը կարող է հետագա գործընթացներում կարևոր և որոշիչ նշանակություն ունենալ:

Այս ամենով հանդերձ, մենք հստակ չենք կարող պնդել, որ այս վավերագրով վերջնականապես լուծվում է կոտորածների թվաքանակի հարցը, սակայն այն, որ սա փոքրիկ, բայց հավաստի վավերագիր է զոհերի թվաքանակի ճշգրտման ճանապարհին, միանշանակ է:

Нарек Акопян, О количестве жертв во время самооборонительных сражений в Сасуне в 1894 г. (по документам архивного фонда Священного Синода), - Сасун, который был одним из регионов вилайета Битлис, становится центром движения самообороны Армении в конце 19-го века. Она была окружена турецкой армией и, следовательно, была объявлена военной зоной.

В этой статье наша цель состоит в том, чтобы проанализировать проблемы, касающиеся самообороны сражений в Сасуне и количество жертв на основе документов Священного Синода.

Narek Hakobian, Quantity of Victims in Sasun Self-Defence Battle of 1894 (Based on Holy Synod's Archive Documents), - Sasun, which was one of the regions in the vilayet of Bitlis, becomes the center of Armenian self-defense movement in the end of 19th century. It was surrounded by Turkish army and therefore was announced a military zone.

In this article our aim is to analyze problems referring to self-defense battles in Sasun and quantity of victims based on the documents of Holy Synod.

Նարեկ Հակոբյան – Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ:



¹ Տե՛ս «Մեղու Հայաստանի», № 5, Հունվար, 1882, էջ 1:
284